ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/226

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարան
Մասնակից՝ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Փանոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12» գնանշման հարցման ընթացակարգ, տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14379-2021 գրությամբ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի 31.08.2021թ.-ի թիվ Ե-08/3833 գրության հիման վրա, 07.09.2021թ.-ին «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 07.09.2021թ.-ին:

09.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/226 համարի ծածկագիրը:

22.09.2021թ.-ին և 07.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.10.2021թ.-ին:

2. <u>ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանը 31.08.2021թ.-ի թիվ Ե-08/3833 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Կապանի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի օգոստոսի 17-ին համայնքապետարանի և «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ միջև կնքվել է «Կապանի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների կատարման» ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6 ծածկագրով գնման պայմանագիրը:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի դեկտեմբերի 25-ը, որը կողմերի միջև կնքված համաձայնագրով երկարաձգվել է մինչև 2021 թվականի մայիսի 31-ը:

Աշխատանքների կատարման նշված ժամկետում և այնուհետև ՍՊ ընկերությունը պայմանագրային պարտավորություններն իրականացրել է մասամբ՝ նախատեսված 12 շենքերի տանիքների վերանորոգման փոխարեն վերանորոգել է 7 շենքի տանիք: Արդյունքում չեն վերանորոգվել Կապան քաղաքի թվով 5՝ Կապան քաղաքի Թումանյան փողոցի թիվ 9, Լեռնագործների փողոցի թիվ 1, Հ. Ավետիսյան փողոցի թիվ 2ա, Հ. Ավետիսյան փողոցի թիվ 26 և Մ. Պապյան փողոցի թիվ 5 շենքերի տանիքները՝ 31620344 /երեսունեկ միլիոն վեց հարյուր քսան հազար երեք հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ ընդհանուր պայմանագրային գնով:

Կապանի համայնքապետարանը միակողմանի լուծել է պայմանագիրը և օրենսդրությամբ սահմանված կարգով լուծման մասին ծանուցումը ուղարկել ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին ու հրապարակել gnumner.am կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խնդրում ենք ձեռնարկել համապատասխան միջոցներ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 23.09.2021թ.-ի թիվ Ե-08/4184 մեկ այլ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Կապանի համայնքապետարանի /այսուհետև՝ Պատվիրատու/ գրավոր հիմքերի համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին /այսուհետև՝ Մասնակից/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեր վարույթում գտնվող թիվ ՍՑ-ԼՕ-

2021/226 ծածկագրով ընթացակարգի /այսուհետև՝ Ընթացակարգ/ կապակցությամբ սփորև ներկայացնում ենք գրավոր դիրքորոշում-առարկություն.

1. Առարկություն Մասնակցի գրավոր դիրքորոշման 2.1 կետի վերաբերյալ.

Կապանի համայնքապետարանը 2020 թվականին կազմակերպել է «Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման»ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգը /այսուհետև՝ Մրցույթ/, որի վերաբերյալ հայտարարություն-հրավերը հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում /այսուհետև՝ Տեղեկագիր/:

Մրցույթի, որը ներառել է 33 չափաբաժին գնման առարկաներ, հրապարակման համար հիմք է հանդիսացել Պատվիրատուի կողմից հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնումների պլանը: Մրցույթին մասնակցել են տասնմեկ կազմակերպություններ և ընտրված մասնակիցներ են ճանաչվել վեց կազմակերպություններ, այդ թվում՝ Մասնակիցը: Մասնակցի կողմից առարկությունն այն մասին, որ Մրցույթը կազմակերպվել է իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, չի խոչընդոտել տասնմեկ կազմակերպություններին մասնակցելու մրցույթին, առավելապես Մասնակցին, ում հետ 2020 թվականի օգոստոսի 18-ին կնքվել է ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԱ-20/12/6 ծածկագրով գնման պայմանագիրը 79 389 520 ՀՀ դրամ ընդհանուր գումարով և չի առաջացրել մտավախություն՝ ոչ իրավաչափության պայմաններում Մրցույթից ածանցյալ գործողությունների իրավաբանական ուժ չունենալու՝ այն է՝ շինարարական աշխատանքներ կատարելու և կատարված աշխատանքների դիմաց վճարումներ չստանալու համար, որը սահմանված կարգով կատարվել է պայմանագրի գործողության ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհեաև՝ Օրենք/ 2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով տրված է գնման առարկայի սահմանումը, այն է՝ գնվող ապրանք, աշխատանք, ծառայություն:

Գնման առարկան որպես այդպիսին ներառված է գնումների պլանում և առկա է Մրցույթի կազմակերպման իրավական հիմքը՝ Պատվիրատուի կողմից հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնումների պլան:

Գնումների միասնական անվանացանկը հանդիսանում է ութ նիշ ունեցող թվային ծածկագիր, որը փոխկապակցված է գնման առարկա հանդիսացող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հետ: Ընդ որում, թվային ծածկագիրը ունի չորս

մակարդակ և գնման ձևի ընտրությունը հիմնվում է անվանացանկի 2-րդ մակարդակում նշված թվերի վրա:

Թվային ծածկագրի որևէ տեխնիկական /մեխանիկական/ վրիպակի հետևանքով մրցույթի ոչ իրավաչափ համարելը համազոր է Մասնակցի գրավոր դիրքորոշումը ոչ իրավաչափ համարելուն, քանի որ դիրքորոշման մեջ անհասկանալի ձևով նշված է Հայաստանի Հանրային Հեռուստատեսության ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգի անվանումը, իսկ ակնհայտ է, որ Պատվիրատուն 2020 թվականի օգոստոսի 17-ին չէր կարող մասնակցի հետ կնքել ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնման պայմանագիրը:

2. Առարկություն Մասնակցի գրավոր դիրքորոշման 2.2 կետի վերաբերյալ.

Կնքված պայմանագրի /ընդ որում ոչ իրավաչափ/ շրջանակում Մասնակիցը իրականացրել է շինարարական աշխատանքներ և կատարողական ակտերի, հանձնման-ընդունման արձանագրությունների, հաշիվ ապրանքագրերի հիման վրա կատարված աշխատանքների դիմաց ստացել է 47 724 720 դրամ գումարի ֆինանսավորում ինչպես համայնքային բյուջեից, այնպես էլ պետական բյուջեից՝ որպես սուբվենցիա:

Մասնակիցը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չի ավարտելու, 2020 թվականի դեկտեմբերին 9-ին դիմել է պատվիրատուին աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգելու նպատակով: Հիմք ընդունելով երկրում ստեղծված ռազմական դրությունը, համաձայն պայմանագրի դրույթների, կնքվել է համաձայնագիր՝ սահմանելով պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նոր վերջնաժամկետ՝ մինչև 2021 թվականի մայիսի 31-ը:

2021 թվականի ընթացքում մասնակցի կողմից մերժվել են համաձայնագիրը վերակնքելու և վճարման ժամանակացույց կնքելու մասին Պատվիրատուի առաջարկները՝ ակնկալելով չներգրավվել գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Թեև հավելում ենք, որ Համաձայնագրի կնքման բուն էությունը պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգումն էր, այն չի հանդիսացել պայմանով գնման որևէ համաձայնագիր կամ վեց ամիսների ընթացքում ֆինանսական միջոցներ նախատեսելու կամ չնախատեսելու առարկա, ավելին, ակնհայտ պետք է լիներ, որ ֆինանսական միջոցները ոչ թե պետք է նախատեսվեին, այլ դրանք արդեն իսկ առկա էին 2020 թվականին, ինչի արդյունքում Մասնակցի հետ կնքվել էր

առանց պայմանի՝ գումարի առկայությամբ պայմանագիր /անգամ սոբվենցիայի մասնաբաժնով/, իսկ 2020 թվականին կնքված գնման պայմանագրերի գործողության ժամկետը Հայաստանի Հանրապետության Կառավարության 30 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 2216-Ա որոշմամբ երկարաձգվել է մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը, որի համաձայն նախատեսված գումարները նախատեսվել են 2021 թվականի բյուջեում:

Ի դեպ, մասնակցի կողմից ներկայացված գրություններում աշխատանքների չկատարումը կամ ուշացումները որևէ կերպ չեն պատճառաբանվել՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցի բացակայության հիմքով, և, մտավախությունն առ այն, որ «Պատվիրատուն պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար այդպես էլ ֆինանսական միջոցներ չնախատեսեց, ինչից կարելի է անել միայն մեկ հետևություն, որ 2021 թվականին կատարված աշխատանքների դիմաց չի կարողանալու վճարել, քանի որ այդ աշխատանքների համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն» անհիմն պատճառաբանություն է:

Մասնակցի կողմից 2021 թվականին շարունակվել են իրականացվել որոշ շինարարական աշխատանքներ, որի դիմաց 22.04.2021 թ կատարվել է 17 526 398 ՀՀ դրամի ֆինանսավորում՝ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սոբվենցիայի չափաբաժնից:

Մասնակցի կողմից արված փաստարկները 2021 թվականին աշխատանքներ կատարելու և դրանց դիմաց վճարումներ չստանալու մասին չեն համապատասխանում իրականությանը:

3. Առարկություն Մասնակցի գրավոր դիրքորոշման 3.4 կետի /2.3 կետի փոխարեն/ վերաբերյալ.

2021 թվականի ընթացքում Պատվիրատուի կողմից շարունակվել են դիմում-հորդորները, զգուշացումները աշխատանքներն ակնհայտորեն ուշացնելու և սահմանված նոր ժամկետում դրանք ավարտին չհասցնելու վերաբերյալ:

2021 թվականի մայիսի 31-ին Կատարողը դիմել է Պատվիրատուին պայմանագիրը լուծելու խնդրանքով՝ հիմնավորելով երկրում ստեղծված ռազմական դրությունը, շուկայում մատակարարվող ապրանքների մինչև 100 % գնաճը՝ հղում կատարելով պայմանագրի «Անհաղթահարելի ուժի ազդեցությունը» դրույթին:

Նշվածի վերաբերյալ Պատվիրատուն արձանագրել է՝ ա/ մասնակիցը դիմել է պատվիրատուին ժամկետի խախտմամբ, բ/ մասնակիցը գնաճի վերաբերյալ չի ներկայացրել փաստացի հիմնավորումներ, գ/ գնման պայմանագրի համաձայն

աշխատանքների գինը կայուն է և Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ ու պայմանագրի դրույթներով սահմանված կարգով արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռքբերվող աշխատանքի միավոր գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխությունների: Մասնակիցը իրավունք չունի պահանջելու ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու գինը: դ/ մասնակիցը հղում է կատարել ֆորս-մաժորի դրույթին՝ վերջինիս ավարտից գրեթե երկու ամիս անց:

Պատվիրատուն 2021 թվականի հունիսի 4-ին գրավոր պատասխանել է Մասնակցին՝ ներկայացնելով պայմանագրային պարտավորությունների չկատարման հետևանքով առաջացած Մասնակցի պատասխանատվությունները:

Եվ փաստարկը, որ Պատվիրատուն չի պատասխանել Կատարողին ևս չի համապատասխանում իրականությանը:

2021 թվականի հուլիսի 1-ին ստացվել է նմանատիպ գրություն՝ պայմանագիրը լուծելու վերաբերյալ:

Պատվիրատուն, գնահատելով Մասնակցի ակնհայտ անգործությունը և սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված ժամկետի ավարտը՝ 2021 թվականի օգոստոսի 24-ին ձեռնարկել է պայմանագրի միակողմանի լուծման և դրանից բխող հետագա գործընթացները:

Հավելում՝

Մասնակցի կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման բացասական ազդեցությունները համայնքի վրա.

ա/ համայնքի թվով 5 բազմաբնակարան շենքերի տանիքների անմխիթար վիճակ,

բ/ համայնքի թվով 5 բազմաբնակարան շենքերում խնդրի լուծման առաջնահերթ կարիք ունեցող թվով 372 բնակիչների խնդրի լուծման հետաձգում,

գ/սուբվենցիոն ծրագրով նախատեսված և աշխատանքների կատարման դեպքում պետական բյուջեից հատկացվելիք շուրջ 31664799 ՀՀ դրամ գումարի ստացման և համայնքին ֆինանսական օժանդակության կորուստ,

դ/գնման ընթացակարգի հնարավոր մասնակիցների մրցակցության սահմանափակում:

Խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով Ձեր վարույթում գտնվող թիվ ՍՑ-ԼՕ-2021/226 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում հաշվի առնել վերոնշյալը:»:

3. <u>«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14379-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ն 17.09.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում Կապանի համայնքապետարանի (այսուհետև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին (այսուհետև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ԼՕ-2021/226 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 27.08.2021թ. թիվ Ե-08/3833 գրությունը (այսուհետև՝ Գրավոր հիմքեր): Գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ միակողմանի լուծել է իր և Մասնակցի միջև 17.08.2020թ-ին կնքված թիվ ՀՀՀ-ԳՀԱՊ ՁԲ-21 /15 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), քանի որ Մասնակիցը Պայմանագիրը կատարել է մասամբ:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1.1. Մասնակիցը մասնակցել է ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետև՝ Մրցույթ): Մրցույթի արդյունքում 14-րդ, 16-20-րդ, 22-23-րդ, 26-28-րդ, 31-րդ չափաբաժինների մասով (այսուհետև՝ Գնման առարկա) Մասնակցի հետ կնքվել է Պայմանագիր: Գնման առարկայի ԳՄԱ ծածկագիրն է՝ 45261124:

1.2. Մրցույթը հրապարակելու պահին Գնման առարկան պարունակող գնումների պլանը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև՝ Տեղեկագիր) հրապարակված չէր:

1.3. Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը սահմանված էր մինչև 2020թ. դեկտեմբերի 25-ն, իսկ կատարված աշխատանքների դիմաց վճարումները, ըստ Պայմանագրի, նախատեսվում էր կատարել մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ: Պայմանավորված Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմով և կորոնավիրուսային համաճարակով 25.12.2020թ.-ի համաձայնագրով Պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 2021 թվականի մայիսի 31-ը: Սակայն Պայմանագրի վճարման ժամանակացույցը չի փոփոխվել:

1.4. 31.05.2021թ-ի գրությամբ Մասնակիցը խնդրել է Պատվիրատուին լուծել Պայմանագիրը, քանի որ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ շինարարական նյութերի գները թանկացել են շուրջ 100%, մասնավորապես՝ հիմնականում թանկացել են՝ երկաթ պարունակող շինարարական նյութերը: Այնուհետև, չստանալով պատասխան, 01.07.2021թ.-ի գրությամբ Մասնակիցը Պայմանագիրը միակողմանի լուծել է:

2.1. Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված է, որ տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 4-րդ կետի համաձայն. «4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում:»:

Կարգի 16-րդ կետի համաձայն. «16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք զպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, (...)»

Կարգի 17-րդ կետի համաձայն. «17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:»:

Կարգի 20-րդ կետի համաձայն. «20. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ 1) պատասխանատու ստորաբաժանում, և 2) գնումները համակարգող 3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...)»

Կարգի 21-րդ կետի համաձայն. «21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, (...)»:

Վերոգրյալ նորմերից հետևում, որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է ունենալ՝ տփալ գնման գործընթացի շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկան պարունակող, սահմանված պահանջներին համապատասխան հաստատված ու Տեղեկագրում հրապարակված գնումների պլան, ընդորում՝ գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշմամբ: Այսպիսով, եթե նշյալ պահանջներին համապատասխանող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէ, ապա պատվիրատուն իրավունք չունի սկսել տփալ գնման գործընթացը: Քանի որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնման առարկան պարունակող գնումների պլանի առկայությունն է: Հետևաբար, եթե գնման գործընթացը կազմակերպվել է առանց սահմանված պահանջներին համապատասխան հաստատված գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակելու, ապա այդ գնման գործընթացը համարվում է կազմակերպված վերոգրյաք իրավական նորմերի խախտմամբ և առանց իոամաեան հիմբի, որպիսի պայմաններում այն չի կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Մրցույթի հրավերի և հայտարարության տեքստը Տեղեկագրում հրապարակելու պահին Գնման առարկան

պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէր: Ուստի նշյալից կարող ենք փաստել, որ Մրցույթը կազմակերպվել է վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում կարելի է փաստել, որ Մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ: Նշյալից էլ հետևում է, որ Մրցույթից ածանցյալ գործողությունները՝ ինչպիսին է նաև այս ընթացակարգը Պատվիրատուի կողմից նախաձեռնելը, իրավաբանական ուժ չեն կարող ունենալ: Ուստի, կարծում ենք, որ այս Ընթացակարգը ենթակա է մերժման:

2.2. Պայմանագրի 5.3.1 կետի համաձայն՝ դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված 3) նախատեսված չափերով և ամիսներին:

Պայմանագրի 8.5 կետի համաձայն՝ Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից 25.12.2020թ-ի համաձայնագրով Պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 2021 թվականի մայիսի 31-ը, բայց Պայմանագրի վճարման ժամանակացույցը չի փոփոխվել: Վճարման ժամանակացույցի համաձայն, Պայմանագրով սահմանված աշխատանքների դիմաց վճարումները նախատեսվում էր իրականացնել մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ: Մենք ակնկալում էինք, որ տարին փոխվելուն պես Պատվիրատուն փոփոխության կենթարկի նաև վճարման ժամանակացույցը՝ 2021թ.-ում Պայմանագրով սահմանված աշխատանքների համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելով: Սակայն տարին փոխվելուց հետո (2021 թվականին) Պատվիրատուն Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար այդպես էլ ֆինանսական միջոցներ չնախատեսեց, ինչից կարելի էր անել միայն մեկ հետևություն, որ 2021 թվականին կատարված աշխատանքների դիմաց Պատվիրատուն չի կարողանալու վճարել, քանի որ այդ աշխատանքների համար Պայմանագրով ֆինանսական միջոցներ նախատեսված չէին: Ելնելով այդ հանգամանքից՝ մենք դադարեցրեցինք Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարումը, քանի որ այդպիսի խմբագրությամբ Պայմանագրի բովանդակությունից ակնհայտ էր, որ 2021 թվականին կատարված աշխատանքների դիմաց Պատվիրատուն Պայմանագրով սահմանված աշխատանքների գինը չէր կարողանալու վճարել: Նշյալ գործելակերպը ունի իրավական հիմք, և այն սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 717-րդ հոդվածով: Ուստի, Պայմանագրով սահմանված

աշխատանքները 2021 թվականի ընթացքում չկատարելը ոչ թե Մասնակցի կամայականության արդյունք է, այլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավաչափ գործողություն է: Հետևաբար կարծում ենք, որ նշյալ հանգամանքներում Պայմանագրով սահմանված աշխատանքները չկատարելու համար Մասնակցին չի կարող վերագրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերությամբ նախատեսված խախտում: Բացի այդ, Պայմանագրի ժամկետը երկարացնելուց հետո Պատվիրատուն Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար 6 (վեց) ամսվա ընթացքում (2021թ.-ին) ֆինանսական միջոցներ չի նախատեսել, ուստի Պայմանագիրը ենթակա էր լուծման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, առանց Մասնակցի նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու:

3.4. Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից 31.05.2021թ.-ի գրությամբ Մասնակիցը խնդրել է Պատվիրատուին լուծել Պայմանագիրը, քանի որ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ շինարարական նյութերի գները թանկացել են շուրջ 100%, մասնավորապես՝ հիմնականում թանկացել են՝ երկաթ պարունակող շինարարական նյութերը: Այնուհետև Պատվիրատուից պատասխան չստանալով, Մասնակիցը 01.07.2021 թ-ի գրությամբ ծանուցել է Պատվիրատուին և հայտնել, որ Պայմանագիրը լուծում է: Այսպիսով, 01 07.2021 թ-ի գրությամբ Մասնակիցը Պայմանագիրը լուծել է այն պատճառով, որ 2021 թվականին շինարարական նյութերի գները թանկացել են շուրջ 100%, որպիսի պայմաններում աշխատանքների կատարումը Մասնակցին կպատճառեր այնպիսի վնաս, որը նրան զգալի չափով կզրկեր այն բանից, որին իրավունք ուներ հավակնել Պայմանագիրը կնքելիս: Ուստի, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի 6-րդ մասով, Մասնակիցը շինարարական նյութերի թանկացման վերաբերյալ ծանուցել է Պատվիրատուին, այնուհետև պատասխան չստանալով 01.07.2021 թ.-ի գրությամբ Պայմանագիրը լուծել է:

4. Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ Մասնակցի գործողությունները ամբողջությամբ բխել են օրենքից, ուստի խնդրում ենք «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերությամբ նախատեսված խախտում:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Ավա-

Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2021/226 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-ԼՕ-2021/226 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի միջև 17.08.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

iii. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է թիվ 2 հավելվածով:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով:

iv. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբ է համարվում պայմանագրի կնքման օրը, իսկ ավարտ՝ 25.12.2020թ.-ը:

v. Պատվիրատուի և «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի միջև 25.12.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. Համաձայնագրի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների վերջնաժակետը երկարաձգվել է մինչև 31.05.2021թ.-ը:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 25.08.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Կապանի համայնքապետարանի և «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ միջև 2020 թվականի օգոստոսի 17-ին կնքվել է «Կապանի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների կատարման» «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6» ծածկագրով գնման պայմանագիրը:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:

2020 թվականի դեկտեմբերի 25-ին կողմերի միջև կնքված Համաձայնագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի մայիսի 31-ը:

«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ նշված ժամկետում և այնուհետև աշխատանքներն իրականացրել է մասամբ՝ պայմանագրում ներառված 12 շենքերի տանիքների վերանորոգման փոխարեն վերանորոգել է 7 շենքի տանիք: Արդյունքում չեն վերանորոգվել Կապան քաղաքի թվով 5՝ Թումանյան փողոցի թիվ 9, Լեռնագործների փողոցի թիվ 1, Հ. Ավետիսյան փողոցի թիվ 2ա, Հ. Ավետիսյան փողոցի թիվ 26 և Ա. Պապյան փողոցի թիվ 5 շենքերի տանիքները, որոնց ընդհանուր պայմանագրային գինը կազմում է 31620344/երեսունմեկ միլիոն վեց հարյուր քսան հազար երեք հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ:

Հաշվի առնելով «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ պայմանագրային պարտավորությունների չկատարումը և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետը՝ համայնքապետարանը միակողմանի մասնակի լուծում է «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6» ծածկագրով գնման պայմանագիրը:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6» ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14379-2021 գրությամբ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի և «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի միջև 17.08.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6» ծածկագրով պետական գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված

ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է թիվ 2 հավելվածով: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբ համարվում պայմանագրի կնքման օրը, իսկ ավարտ՝ 25.12.2020թ.-ը:

Պատվիրատուի և «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի միջև 25.12.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի համաձայն՝ պայմաանգրով նախատեսված աշխատանքների վերջնաժակետը երկարաձգվել է մինչև 31.05.2021թ.-ը:

ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի և «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի միջև 17.08.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/12/6» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների ողջ ծավալը, համաձայն որի Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.08.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 25.08.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով

նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14379-2021 գրությամբ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/226 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**